ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 դեկտեմբերի 2016 թվականի N 128_Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N762 որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբեր 23-ի նիստի N1 արձանագրության՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային մարզային հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբեր 23-ի նիստի N1 արձանագրության արդյունքները՝ համաձայն հավելվածի:
2. «Մեղրի-Կապան», «Սիսիան-Սպանդարյան-Ծղուկ-Գորայք» ներմարզային երթուղի-ների սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ.ՀԱԿՈԲՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 27
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2016 թվականի
դեկտեմբերի 27-ի N 128 -Ա որոշման

Արձանագրություն N1

ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 23 դեկտեմբերի 2016 թվականի N 1 նիստի

Օրակարգում – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2016 թվականի դեկտեմբերի 20-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի թվով հինգ անդամներ և նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ Վ. Դավթյան:

Լսեցին – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2016 թվականի դեկտեմբերի 20-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

/ Զեկ. Ս. Աղաբեկյան/

Ուսումնասիրելով կայացած մրցույթի ընթացքում մասնակցների ներկայացրած հայտերը և գնահատելով մրցույթին ներկայացված տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակները մրցութային հանձնաժողովը որոշում է.

1.Հաղթող ճանաչել անհատ ձեռնակատեր Վիլիկ Ազարյանին ներմարզային հետևյալ երթուղում.

1.1<<Մեղրի-Կապան>> ավտոմեքենայի մակնիշը <<ՖՈՐԴ>> պետհամարանիշը՝ 2285Լ:

2.Հաղթող ճանաչել անհատ ձեռնակատեր Մեխակ Ալեքսանյանին ներմարզային հետևյալ երթուղում.

2.1 <<Սիսիան-Սպանդարյան-Ծղուկ-Գորայք>> ավտոմեքենայի մակնիշը՝ <<ՖՈՐԴ>> պետհամարանիշը՝ 3202Լ :

2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը:

(Քվեարկության արդյունքները ՝ կողմ '5, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա):

Հանձնաժողովի նախագահ Վ.Դավթյան

անդամներ Ռ. Ավետիսյան

Ս. Աղաբեկյան

Ս.Ավետիսյան

Ս.Արզումանյան